BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

07.03.2019թ.
N 031903

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ ԱԾ- 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Հանրային
Հեռուստառադիոընկերության» խորհրդին**

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝"Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք

բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի լուսաբանում

Ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2018 թվականի ապրիլի 16-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունները օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Ընկերությունը կկորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր
Լ. Ղևոնդյան

07.03.2019թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2018թ-ի դրությամբ

	Ծանոթ	2018թ.	*(հազար դրամ)* 2017թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	9,171,346	9,843,740
Ոչ նյութական ակտիվներ	5	760,537	1,125,041
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	6	53,046	543,348
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*9,984,929*	*11,512,129*
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	36,397	47,627
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	603,588	258,863
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	3,672	2,271
Այլ ընթացիկ ակտիվներ	9	101,076	70,879
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*744,733*	*379,640*
Ընդամենը ակտիվներ		10,729,662	11,891,769
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	10	1,213,058	1,213,058
Վերագնահատման պահուստ	10	1,919,176	2,021,635
Էմիսիոն եկամուտ		755	755
Կուտակված շահույթ (վնաս)		253,069	126,901
Այլ պահուստ		74,949	72,949
Ընդամենը սեփական կապիտալ		*3,461,007*	*3,435,298*
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	13	491,983	451,827
Հետաձգված եկամուտ	11	5,349,448	5,831,647
Հետաձգված հարկեր ներմուծման ԱԱՀ-ի գծով		52,136	52,136
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	432,251	522,476
Ոչ ընթացիկ կրեդիտորական պարտքեր		44,292	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*6,370,110*	*6,858,086*
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	13	519,479	1,080,650
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	379,066	500,383
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	17,352
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*898,545*	*1,598,385*
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		10,729,662	11,891,769

Մարգարիտա Գրիգորյան

Գործադիր տնօրեն

06.03.2019թ.

Օֆելյա Գյոդակյան

Գլխավոր հաշվապահ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2018թ. ավարտված տարվա համար

	Ծանոթ.	2018թ.	*(հազար դրամ)* 2017թ.
Գովազդային և այլ հասույթ	15	213,022	250,221
Դրամաշնորհներից եկամուտ	16	6,107,812	5,907,534
Այլ դրամաշնորհներից եկամուտ		15,235	5,355
Այլ եկամուտներ		20,323	18,275
Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր	17	(2,482,759)	(2,273,610)
Հեռարձակման ծախսեր	18	(271,530)	(280,519)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(1,787,784)	(1,659,058)
Մաշվածություն և ամորտիզացիա		(1,414,177)	(1,412,351)
Այլ ծախսեր	19	(278,156)	(351,232)
Ֆինանսական եկամուտ	20	1	5
Ֆինանսական ծախս	20	(135,160)	(151,627)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		11,029	(34,931)
(Վնաս)/Շահույթ մինչև հարկումը		*(2,144)*	*18,062*
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	21	58,991	(10,214)
Տարվա շահույթ		*56,847*	*7,848*
Այլ համապարփակ արդյունք			
Հիմնական միջոցների վերագնահատումից աճ		-	15,219
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		-	(3,044)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	12,175
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		56,847	20,023

1-28 ծանոթագրությունները կազմում են սույն
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատման պահուստ	Այլ պահուստներ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	1,160,017	755	2,117,405	67,647	83,821	3,429,645
Համապարփակ եկամուտ						
Տարվա զուտ շահույթ	-	-	-	-	*7,848*	*7,848*
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	*12,175*	-	-	*12,175*
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	12,175	-	7,848	20,023
Փոխանցում չբաշխված շահույթին	-	-	(107,945)	-	107,945	-
Պահուստային հիմնադրամի աճ	-	-	-	5,302	(5,302)	-
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	*(67,411)*	*(67,411)*
Թողարկված կանոնադրական կապիտալ	*53,041*	-	-	-	-	*53,041*
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	53,041	-	-	-	(67,411)	(14,370)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	1,213,058	755	2,021,635	72,949	126,901	3,435,298
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	1,213,058	755	2,021,635	72,949	126,901	3,435,298
Տարվա զուտ շահույթ	-	-	-	-	*56,847*	*56,847*
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-
Ընդամենը համապարփակ եկամուտ	-		-	-	56,847	56,847
Փոխանցում չբաշխված շահույթին	-	-	(102,459)	-	102,459	-
Պահուստային հիմնադրամի աճ	-	-	-	2,000	(2,000)	-
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ						
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	*(31,139)*	*(31,139)*
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	(31,139)	(31,139)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	1,213,058	755	1,919,176	74,949	253,069	3,461,007

1-28 ծանոթագրությունները կազմում են սույն
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2018թ.	2017թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա զուտ շահույթ	*56,847*	*7,848*
Ճշգրտումներ		
Մաշվածության, ամորտիզացիայի ծախս	2,053,791	2,258,386
Ոչ նյութական ակտիվների դուսգրում	9,198	-
Շնորհից եկամուտ	(6,123,047)	(5,912,889)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(11,029)	34,931
Տոկոսային եկամուտ	(1)	(5)
Տոկոսային ծախս	135,160	151,627
Շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս	(58,991)	10,214
Դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխություններ	**(3,938,072)**	**(3,449,888)**
Պաշարների նվազում/(աճ)	11,230	(31,306)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի նվազում/(աճ)	145,685	(134,856)
Այլ ընթացիկ ակտիվների աճ	(30,197)	(70,879)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի նվազում	(75,045)	(126,094)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	**(3,886,399)**	**(3,813,023)**
Ստացված շնորհներ	5,132,348	5,244,371
Վճարված շահութահարկ	(48,586)	(44,880)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**1,197,363**	**1,386,468**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(217,816)	(394,259)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(299,775)	(575,354)
Ստացված տոկոսներ	1	5
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(517,590)**	**(969,608)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների մարում, զուտ	(507,833)	(256,857)
Տոկոսների վճարում	(139,846)	(145,000)
Շահաբաժինների վճարում	(31,139)	(14,370)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(678,818)**	**(416,227)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**954**	**633**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	447	21
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	2,271	1,617
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցները և նրանց համարժեքները	**3,672**	**2,271**

1-28 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: